Վերիշեն գյուղ

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 68 կմ,
Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 3 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1600 մ,
Գյուղը հիշատակվում է Գորայք (9-18դդ.), Յերիշեն, Հին Գորիս անվանումներով և գտնվում է Գորիս քաղաքի մոտ՝ նրա հյուսիսային մասում: Վերիշենը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Գյուղի տարածքում և շրջակայքում կան ժայռափոր բնակարաններ, դամբարանադաշտեր («Բաբախանի կալեր» մ.թ.ա. 2-1հզմ.), գերեզմանոցներ (16-17դդ.), գյուղատեղիներ (Հին Վերիշեն, Սինդարայ, Սողթանաձոր (Ղոշաքար), արձանագրված ժայռաբեկոր (1924թ., X դարում վերակառուցված ջրանցքի մասին): Գյուղում կա երկու եկեղեցի՝ Սբ.Հռիփսիմե, Սբ.Նորակնանք: Հատկապես նշանավոր է Սբ.Հռիփսիմեն (4-5դդ.), որը Հայաստանի միանավ հուշարձաններից չափերով ամենախոշորն է (երկարությունը՝ 27.3մ): Ըստ դռան ճակատային արձանագրության, այն հիմնովին վերակառուցվել է 1621թ., Սբ.Նորավանքը (19-րդ դար) 1994թ. կանադահայերի հովանավորությամբ վերանորոգվել է և այժմ գործում է: Վերիշենում է ծնվել գվարդիայի գեներալ-լեյտենանտ՝ Բ.Առուշանյանը:
Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Հողային և այլ բնական ռեսուրսներ
Հողեր (ընդամենը)՝ 4762 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4396 հա, որից՝
- վարելահող՝ 110 հա, խոտհարք՝ 494 հա, արոտ՝ 2691 հա, այլ հողատեսք՝1101 հա
- բնակավայրերի հողեր՝ 129 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 8 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝4 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 217 հա,
- ջրային հողեր՝ 8 հա